ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով **համակարգչային սարքերի և սարքավորումների, այլ գրասենյակային սարքերի վերանորոգման և սպասարկման ծառայությունների** ձեռքբերման նպատակով ձևավորված **ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ՀՊՍՎ-25/1** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

06 դեկտեմբերի 2024թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյանը, Կ. Մարտիրոսյանը, Ա. Թումանյանը, Ս. Գարանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Նազարյանը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված ծառայության առավելագույն գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*	*Գնման հայտով սահմանված միավոր առավելագույն գների հանրագումարը մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*
1	**համակարգչային սարքերի պահպանման – վերանորոգման ծառայություններ**	**1 000 000**	**2 501 000**
2	**պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ**	**3 500 000**	**3 666 700**

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ՀՊՍՎ-25/1 ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտը բացվել է ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1,2	«Մ Վ սերվիս» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00130965, ք. Երևան, Ազատության 27,հեռ. 098 68 87 88 , mv@toner.am
2	ԱՁ «Անուշ Պետրոսյան»	ՀՎՀՀ՝ 49557658, ք. Երևան, Արշակունյաց 5, հեռ. 010-56-90-96, ga-c@mail.ru
1,2	«ՎԱՆԿՈՄՊ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01281243, ք. Երևան, Կուրղինյան նրբ. 6, հեռ. 041 50 18 24 , vancomp@bk.ru
-	«Այ Սերվիս» ՍՊԸ	-

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ «Այ Սերվիս» ՍՊԸ-ի՝ փաստաթղթերի փաթեթը կցված չէ: Արդյունքում, Հանձնաժողովը որոշեց «Այ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերն արձանագրեց, որ ներկայացված փաստաթղթերում կան անհամապատասխանություններ, մասնավորապես.

4.1.1 **«ՎԱՆԿՈՄՊ» ՍՊԸ-ի** ներկայացված հայտում կցված չէ լիազորագիրը, լիազորողի և լիազորված անձի անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենները: Ներկայացված Հավելված 1-ը (այսուհետ՝ Դիմում-հայտարարությունը) չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված Հավելված 1-ին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ՀՊՍՎ-25/1** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ նիստը կասեցնել և 09.12.2024թ.-ին ծանուցել «ՎԱՆԿՈՄՊ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը

Չափաբաժին 1՝ **համակարգչային սարքերի պահպանման -վերանորոգման ծառայություններ**

հ/հ	Մասնակցի անվանումը	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Մ Վ սերվիս» ՍՊԸ	1 250 500	250 100	1 500 600
2	«ՎԱՆԿՈՄՊ» ՍՊԸ	1 800 720	-	1 800 720

Չափաբաժին 2՝ **պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ**

հ/հ	Մասնակցի անվանումը	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Մ Վ սերվիս» ՍՊԸ	1 833 350	366 670	2 200 020
2	ԱՁ «Անուշ Պետրոսյան»	1 890 900	-	1 890 900
3	«ՎԱՆԿՈՄՊ» ՍՊԸ	3 153 362	-	3 153 362

6. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների, պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ, պատասխաններ չեն եղել: Հրավերի փոփոխություն չի կատարվել:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 12.12.2024թ. ժամը 15:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. *12.12.2024թ. ժամը 15:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ*

Նիստը վերսկսվեց 12.12.2024թ. ժամը 15:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ սահմանված ժամկետում «ՎԱՆԿՈՄՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է շտկման ենթակա փաստաթղթերը:

9. Հանձնաժողովը որոշեց՝

9.1 **«ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ՀՊՍՎ-25/1»** ծածկագրով մրցույթի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից **«Մ Վ սերվիս» ՍՊԸ-ին:**

9.2 Հաստատել **«ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ՀՊՍՎ-25/1»** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) — Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Վահագն Մկրտչյան

2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Կատյա Մարտիրոսյան

3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Աննա Թումանյան

4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Սիլվա Գարանյան

5.Գնման Պատասխանատու/ հանձնաժողովի քարտուղար (ԳՊ/ՄՀմ) — Սիրուշ Նազարյան